



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն**

«08» 08 2008թ.

№ 1-06/334-Ա

ք. Երևան

**ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ԳՐՔԵՐԻ ԵՎ ՀՍԿԻՉ-
ԴՐԱՄԻԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11¹-րդ հոդվածը և նպատակ ունենալով կանոնակարգելու առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեություն իրականացնող ու սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենաներ ներդնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների, ինչպես նաև վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքերի և ՀԴՄ-ների հարկային մարմնի կողմից գրանցելու հարցերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հարկային (տարածքային) տեսչության պետերին՝

1. Առևտրի իրականացման վայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային տեսչություն ներկայացրած՝ ՀՀ կառավարության 31.07.1997թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N314 և «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N315 որոշումներով հաստատված կարգով սահմանված գրքերի գրանցումն իրականացնել հայտը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

2. Առևտրի իրականացման վայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային տեսչություն ներկայացրած ՀԴՄ-ները գրանցել ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N1325-Ն որոշմամբ հաստատված շահագործման կանոնների 4-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

3. Ապահովել սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դիմումների անհապաղ և անխտիր ընդունումը և դրանց հետագա ընթացքը: Ընդ որում, բացառել դիմումների հետագա ընթացքի անհարկի ձգձգումները, ներկայացված գրքերի և ՀԴՄ-ների գրանցման համար օրենսդրությամբ չնախատեսված և ձևական պահանջների, մասնավորապես՝ գործունեության իրականացման վայրի (հասցեի) նկատմամբ իրավունքի ձևակերպումը (սեփականության իրավունքի վկայական, տարածքի վարձակալության կամ օգտագործման պայմանագիր) հաստատող փաստաթղթի ներկայացումը:

ՀՀ ԿԱ ՀՊԾ ՊԵՏ՝

Ա. ԱՂՅԱՆԻԱՆ